

Երեսնամյա այսպես

ՄԱՅՐ ԱՅՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հանրաժեհական մաղթանք եւ այց Սարգարաշատի հուշահամալիր



թեց մայիսյան հերոսամարտերում զոհված քաջորդիների հոգիների համգատության համար:

Լրագրողների հետ զրույցում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորապես նշեց. «Ամեն տարի Հանրապետության տոնի օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության հետ գալիս ենք նվիրական այս վայրը՝ Սարգարաշատի հուշահամալիր, մեր աղոթքը առ Աստված բարձրացնելու մեր հայրենիքի եւ մեր ժողովրդի ապահով, խաղաղ ու անվտանգ կյանքի համար: Այսօր եւս մեր աղոթքը բարձրացրեցինք՝ խնդրելով, որ Տիրոջ օրհնությունը հովանի լինի մեր ազգի ու հայրենիքի վրա, որ պահի ու պաշտպանի մեր ժողովրդին բոլոր փորձություններից:

Դժվարին ժամանակներ ենք ապրում եւ մեր մաղթանքն է, որ մեր ժողովուրդն իր կյանքն ապրի Սարգարաշատի խորհրդին ունկնդիր, ներշնչվի

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հանրաժեհության տոնի առիթով



Մայիսի 28-ի առավոտյան, Հանրապետության տոնի առիթով, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ս. Գայանե վանքում կատարվեց Հանրապետական մաղթանք:

Հոգեւորականաց դասը, ներկա ժողովուրդն ու զինվորականները աղոթք բարձրացրեցին առ Աստված Հայաստանի Հանրապետության անասանության, խաղաղ եւ անվտանգ կյանքի համար:

Մաղթանքի ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների հետ այցելեց Սարգարաշատի հուշահամալիր, որտեղ Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն արք. Աղանյանի, թեմի եկեղեցականների եւ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթեոսյանի ուղեկցությամբ Նորին Սրբությունը ծաղկեպսակ զետեղեց հուշակոթողի առջեւ, ապա աղո-



ւ եւ քաջալերվի Սարգարաշատի խորհրդով, որն այնքան գեղեցկորեն բանաձեւված է մեծն բանաստեղծի՝ Պարույր Սեալի խոսքերով. «Երբ չի մնում ելք ու ճար, խենթերն են գտնում հմար»:

Այսօրվա Մեր պատգամը պիտի լինի, որ ազգիս յուրաքանչյուր զավակ լինի նվիրյալ խենթը հայրենիքի, եւ հայրենիքի սիրով միաբանված, մեկ կամք, մեկ բռունցք, մեկ սիրտ դարձած լծվենք մեր հայրենիքի զորության, բարօր կյանքի կերտմանը եւ միասնական ջանքերով հեռու վանքնք մեր սահմաններից բոլոր վտանգներն ու փորձությունները, որոնք սպառնում են մեր ինքնությանը եւ պետականությանը: Թող Տիրոջ Աջը օգնական եւ պահապան լինի ազգիս հայոց այսօր եւ միշտ»:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում համայն մեր ժողովրդին եւ շնորհավորում Հանրապետության տոնի առիթով:

Այս տարի մեր երկրի համար բարդ ու ծանր իրավիճակում ենք մշում Հանրապետության տոնը եւ վերստին անդրադառնում Հայաստանի առաջին Հանրապետության հաստատման հիշատակներին: Ավելի քան 100 տարի առաջ ցեղասպանության եւ հայրենագրկման դառը հարվածները կրած մեր ժողովուրդը կանգնել էր նաեւ իր հայրենիքի արեւելյան հատվածը եւ իր գոյությունը պաշտպանելու մեծ մարտահրավերների առջեւ, սակայն չընկրկեց եւ արի ոգով ու միասնաբար պայքարեց մայիսյան հերոսամարտերում՝ վերականգնելով հայրենի պետականությունը: Առաջին Հանրապետությունը թեւեւ երկար չգոյատեւեց, սակայն եղավ անկախ պետականության տեսանելի առիավատչյան, որի ներշնչումով կերտվեցին վերագարթոնքի հետագա հաղթանակները մեր ժողովրդի:

Այսօր եւս մենք մտահոգ ենք հայրենի մեր երկրի առջեւ ծառացած հիմնախնդիրներով, մեր սահմանների, մեր ժողովրդի անվտանգ ու ապահով կյանքի նկատմամբ շարունակական ոտնձգություններով: Սակայն, հավատում ենք, որ մայիսյան հերոսամարտերի հաղթական ոգով մեր ժողովուրդը Աստծո օգնությամբ ուժ պիտի գտնի դուրս գալու նաեւ այս փորձությունից եւ համընդհանուր ջանքերով ձեռնամուխ լինելու մեր հայրենիքի զորացմանը, պետականության ամրապնդմանը, հայոց լուսավոր գալիքի կերտմանը:

Թող Աստված խաղաղություն պարգևի համայն աշխարհին, մեր երկրին ու ժողովրդին եւ Իր անբավ շնորհների ներքո գոյություն տա իրագործելու մեր համազգային նպատակները, ապահով ու բարօր կյանքի մեր ձգտումները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դաճառաւրսում է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իր մտահոգությունն է հայտնում մայիսի 27-ի առավոտյան Գեղարքունիքի մարզի սահմանային հատվածում՝ ՀՀ ՁՈՒ Ռ զորամասի պահպանության տարածքում, աղբեջանական զինծառայողների կողմից ՀՀ ՁՈՒ վեց զինծառայողի շրջափակման եւ գերեվարման առնչությամբ, ինչին հաջորդեց նաեւ նվաստացուցիչ պատկերների հրապարակումը համացանցում:

Խստորեն դատապարտելի է Աղբեջանի իշխանությունների նման վարքագիծը, որը ոտնահարում է միջազգային

իրավունքի դրույթները, հակասում արարչապատվեր մարդասիրության համամարդկային ընկալումներին:

Վերջին օրերին հայ-աղբեջանական սահմանի Գեղարքունիքի եւ Սյունիքի հատվածներում տեղ գտնող իրադարձությունները ոտնձգություն են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության եւ մեր ժողովրդի խաղաղ ու անվտանգ կյանքի իրավունքի հանդեպ: Նմանօրինակ սաղրիչ գործողություններն ի ցույց են դնում Աղբեջանի ռազմատենչ իրական միտումները՝ վտանգելով տարա-

ծաղրջանում խաղաղության վերականգնման եւ կայունության հաստատման ուղղությամբ ներդրվող բազմակողմանի ջանքերը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը կոչ է անում միջազգային հանրությանը եւ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ատյաններին՝ քայլեր ձեռնարկել հայ զինծառայողներին ու մնացյալ ռազմագերիներին ազատ արձակելու եւ կանխելու նորանոր անցանկալի զարգացումները տարածաշրջանում:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց


25 մայիսի **ՀՀ-ում Ճապոնիայի նորանշանակ դեսպանին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ճապոնացի Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում ճապոնիայի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆուկուսիմա Մասանորին:

Հանդիպմանը Նորին Սրբությունն իր բարեմաղթանքները բերեց դեսպանին եւ հաջողություններ մաղթեց նրան իր առաքելության մեջ՝ կարեւորելով երկու պետությունների միջեւ հաստատված սերտ համագործակցությունը: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ արձանագրեց նաեւ Մայր Աթոռի եւ ճապոնիայի դեսպանության միջեւ ձեւավորված փոխգործակցային հարաբերությունները, մասնավորապես Մայր Աթոռի եւ թեմերի կողմից իրականացվող կրթական տարբեր ծրագրերին եւ մշակութային արժեքների պահպանության ու խնամքի աշխատանքներում դեսպանատան ցուցաբերած աջակցությունը:

Իր հերթին նորանշանակ դեսպանը հավաստիացրեց Վեհափառ Հայրապետին, որ կանի առավելագույնը երկու ժողովուրդների կապերն առավել սերտացնելու եւ ամրապնդելու գործում: Կարեւորելով երկու երկրների միջեւ առկա կապերը՝ դեսպանը նշեց, որ ճապոնիայի կառավարությունը պիտի շարունակի մարդասիրական գորակցություն ցուցաբերել Հայաստանին: Անդրադառնալով հետագա ծրագրերին՝ դեսպան Մասանորին նշեց, որ ջանքեր պիտի գործադրի երկու երկրների միջեւ տնտեսական կապերի զորացման եւ մշակութային ոլորտում գործակցության զարգացման ուղղությամբ, հատուկ նշանակություն պիտի կատարվի երիտասարդների շփման ծրագրերին:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած ռազ-



մական գործողություններին, պատերազմի աղետալի հետեւանքներին եւ առկա մարտահրավերներին, ինչպես նաեւ միջազգային հանրության արձագանքի անհրաժեշտությանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորաբար կարեւորեց ճշմարտության բարձրաձայնումը նմանօրինակ արհավիրքների կանխման համար՝ ընդգծելով, որ լուրջությունը կարող է ոճրագործությունների կրկնության պատճառ դառնալ: Դեսպանը եւս ցավ արտահայտեց այս կապակցությամբ՝ նշելով, որ հակամարտությունների կարգավորումն ընդունելի է միայն խաղաղ միջոցներով:

Հանդիպման առիթով Նորին Սրբությունն իր երախտագիտությունը հայտնեց այս դժվարին օրերին ճապոնիայի կողմից Հայաստանին ցուցաբերված գորակցության համար:

27 մայիսի **ՀՀ-ում Արգենտինայի նորանշանակ դեսպանին**



զենտինան Հայոց ցեղասպանությունը ճանաչած առաջին պետություններից է եղել եւ ինչպես անցյալում, այնպես էլ այսօր իր գորակցությունն է բերում հայ ժողովրդին:

Վերհիշելով Արգենտինա կատարած իր հովվապետական այցերը՝ Նորին Սրբությունն ընդգծեց այն հոգածու վերաբերմունքը, որ դրսևորվում է Արգենտինայի իշխանությունների կողմից հայ համայնքի նկատմամբ, անդրադարձավ նաեւ Հայոց Եկեղեցու հետ ձեւավորված միջեկեղեցական սերտ կապերին:

Դեսպան Վերգարան իր հերթին հավաստիացրեց Վեհափառ Հայրապետին, որ կանի առավելագույնը՝

երկու ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունն ամրապնդելու ուղղությամբ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողություններին, պատերազմի աղետալի հետեւանքներին եւ առկա մարտահրավերներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մտահոգությամբ արձարծեց ՀՀ Գեղարքունիքի մարզի սահմանային հատվածում մայիսի 27-ի առավոտյան վեց հայ զինծառայողների զերեկարման միջադեպը՝ կարեւորելով, որ միջազգային հանրությունն իր հերթին պետք է արձագանքի՝ խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերը խաթարող նման անընդունելի եւ դատապարտելի երեւոյթներին:

ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության նորանշանակ դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ջոն Գալագերին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը դեսպան Գալագերին բերեց արդյունավետ առաքելության իր բարեմաղթանքները:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձ կատարեց Արցախյան երկրորդ պատերազմին եւ դրա ծանր հետեւանքներին: Առկա մարտահրավերների եւ օրերս հայադրբեջանական սահմանին տեղ գտնող սադրիչ գործողությունների հաղթահարման գործում Նորին Սրբությունը կարեւոր նկատեց նաեւ միջազգային հանրության համապատասխան արձագանքը եւ գնահատականը:

Մասնավորապես արձարծվեց Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների ազատ արձակման եւ հայրենիք վերադարձի խնդիրը: Քննարկվեցին նաեւ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում Արցախի թեմի հոգեւոր ու պատմամշակութային ժառանգության նկատմամբ դրսևորվող բարբարոսական վերաբերմունքին եւ հայկական սրբավայրերի պատկանելության կեղծմանն առնչվող հարցեր:



Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ միջազգային հանրության կողմից առավելագույն ջանքեր կներդրվեն՝ նպաստելու առաջացած խնդիրների շուտափույթ հանգուցալուծմանը եւ տարածաշրջանում խաղաղության ապահովմանը:

Քահանայից ամենամյա հավաք Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Մայիսի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, մախազահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ճապոնացի Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ քահանայից ամենամյա ժողովը, որին մասնակցում էին Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսները, թեմակալ առաջնորդները, միաբանները, ինչպես նաեւ Հայաստանի եւ Արցախի թեմերում սպասավորող շուրջ 184 եկեղեցական:

Մինչ հավաքը Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ Ս. Գայանե վանքում կատարվեց Արեւագալի ժամերգություն: Այնուհետեւ Էջմիածնի «Հրաչ եւ Սյուզան Թուֆայան» հայորդյաց տանը ժողովն սկսեց իր աշխատանքը:

Հավաքը բացվեց կազմակերպիչ հանձնախմբի մախազահ եւ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արք. Աջապահյանի ողջույնի խոսքով եւ «Հանրապետությունում առկա իրավիճակի վերլուծում. մարտահրավերներ» եւ «Եկեղեցու անելիքները ներկա իրավիճակում» թեմաներով բանախոսությամբ:



Ներկայացված նյութերի շուրջ ծավալվեցին քննարկումներ, եկեղեցականները ներկայացրեցին իրենց դիտարկումներն ու առաջարկները՝ անդրադառնալով երկրում ստեղծված ծանր իրավիճակին եւ դրա հաղթահարման գործում հոգեւորականության առաքելությանը, ինչպես նաեւ ռազմագերիների, զոհվածների, անհայտ կորածների, վիրավորների եւ տեղահանվածների ընտանիքներին ցուցաբերվելիք առանձնակի հոգեւոր խնամքին եւ ներկա պայմաններում եկեղեցու կողմից իրականացվող սոցիալական, հովվական ծառայությանը:

Ժողովը եզրափակվեց Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամով:

«Աստծո կամոք հնարավոր եղավ կազմակերպել Հայաստանի եւ Արցախի թեմերում ծառայող քահանաների ամենամյա հանդիպումը, թեւ մարդկությանը պատուհասած համավարակը դեռ չի հաղթահարվել: Նման հավաքի անհրաժեշտությունն առավել հրամայական է ներկա պայմաններում, երբ մեր ժողովուրդը եւ հայրենիքը Ադրբեջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմի հետեւանքով կրեցին ցավալի կորուստներ, եւ մեր պետության առջեւ հառնեցին լրջագույն մոր մարտահրավերներ: Արցախյան պատերազմը մեր առջեւ պարզեց շատ ճշմարտություններ՝ թե՛ աշխարհաքաղաքական իրողությունների եւ թե՛ ներքաղաքական, հասարակական կյանքի սխալ ընթացքների, բացթողումների եւ թերությունների առումով: Ժամանակի մեջ, վստահ ենք, դեռ ամբողջական գնահատական պիտի տրվի բոլոր երեւոյթներին», – ասաց Նորին Սրբությունը՝ նկատելով, որ այս ժողովը նաեւ պատեհ առիթ է դժվարին այս իրադրության մեջ քննարկելու եւ սահմանելու հովվական, հոգեխնամ եւ սոցիալական առաջնահերթությունները, ըստ հարկի վերատեսության եմթարկելու ներկա բարդ հանգամանքներում հովվական առաքելության իրականացման կերպերը:

Իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ համավարակի, ապա Արցախյան պատերազմի հետեւանքով ստեղծված իրավիճակին, արտաքին մարտահրավերներին: «Ստահողիչ է այսօր նաեւ Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումների պատճառով հայրենիքի սահմաններին տիրող իրավիճակը, Գեղարքունիքի եւ Սյունիքի սահմանամերձ շրջաններում բնակվող մեր ժողովրդի անվտանգության հարցը, որը լուրջ անհանգստություններ է առաջ բերել ամբողջ երկրում: Երեկ տակավին ցավով տեղեկացանք, որ Ադրբեջանական սադրանքի հետեւանքով զոհվել է հայ զինվորական: Խստորեն դատապարտելով Հայաստանի ինքնիշխանության եւ մեր ժողովրդի իրավունքների հանդէպ ոտնձգությունները՝ եկեղեցին իր բոլոր հնարավոր միջոցներով աշխատանք պիտի տանի այս ոտնձգությունների կանխարգելման, գերիների ազատության, հոգեւոր մեր սրբությունների պաշտպանության համար», – նշեց Վեհափառ Հայրապետը՝ հավելելով, որ հարյուր տարի անց՝ մեր օրերում եւս, դեռ հառնած է մեր ժողովրդի ինքնապաշտպանության հրամայականը, եւ հայրենի մեր երկիրը կանգնած է կրկին նույն մարտահրավերների առջեւ՝ պայքարելով հանուն մեր ինքնության եւ պատմական հայրենիքի այս փոքրիկ հողակտորի վրա անվտանգ գոյատեւման իրավունքի:

Նորին Սրբությունն ընդգծեց, որ եկեղեցու սրբազան առաքելությունն է ոչ միայն մասնակից դառնալ առկա մարտահրավերների հաղթահարման աշխատանքների, այլեւ լինել ամոքողը ցավի, սփոփողը վշտերի, ցրողը մեր ժողովրդի հոգին պատած անհուսության եւ տրտմության: ➔ էջ 3

Քահանայից ամենամյա հավաք Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

← էջ 2

Հայոց Հոգևորականության գնահատանքով անդրադարձավ պատերազմի ծանր օրերին եւ հետագա ամիսներին եկեղեցականների կողմից իրականացված աջակցության բազմաբնույթ ծրագրերին:

Խոսելով պատերազմի բերած աղետալի հետեւանքների, դրանց պատճառած քաղաքական վայրկյաններին եւ առաջիկա խորհրդարանական ընտրությունների մասին՝ Ամենայն Հայոց Հայրապետը նշեց, որ եկեղեցու սրբազան



պարտքն է ցույց տալ ծառացած մարտահրավերների իրական վտանգը, ահազանգել հայրենիքում տեղ գտնող անցանկալի զարգացումների մասին, հոգ տանել ազգային համախմբման համար՝ ի խնդիր անընդունելի իրավիճակների եւ ատելության ու անհանդուրժողության մթնոլորտի հաղթահարման:

«Առաջիկա ամիսը վճռորոշ է լինելու մեր երկրի եւ մեր ժողովրդի համար: Պետք է ջանքեր գործադրենք, որ մախընտրական այս շրջանում մեր ժողովուրդը չկանգնի մեր պառակտումների եւ եղբայրատյացության դրսևորումների առջեւ: Մեր ժողովրդի զավակներին հորդորենք իրենց ընտրության մեջ առաջնորդվել ազգի ու հայրենիքի գերագույն շահով, լինել արդարամիտ եւ անաչառ: Եկեղեցին քաղաքականության մեջ միջամուխ լինելու հավակնություն չի դրսևորել եւ չի դրսևորում, ձեռնարկվող քայլերը պայմանավորված են սոսկ ճգնաժամային բարդագույն իրավիճակով, որի դիմագրավման հարցում հապաղումը այլեւս հղի է մեր արհավիրքներով: Հայրենի երկրի ապագայի տեսլականից մղված՝ պետք է արվի անհրաժեշտ՝ հայրենիքը զորացնելու եւ մեր ժողովրդին հույսի ապրում փոխանցելու համար: Եկեղեցին ունի կարեւոր առաքելություն՝ վերապրած պատերազմի, կրած կորուստների եւ ապագայի անորոշության պատճառով առաջացած անկումային հոգեվիճակը հաղթահարելու, վաղվա օրվա հանդեպ լավատեսությունն ամրապնդելու, երկրից արտագաղթը կասեցնելու: Այս նպատակով խիստ անհրաժեշտ է եւ կարեւոր նաեւ յուրաքանչյուր եկեղեցականի ջանադիր աշխատանքը, նախանձախնդրությունը եւ անձնական օրինակը»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ առաջիկայում ժողովրդի ազատ կամարտահայտությամբ ձեւավորվի հայրենամարտ, ազգասեր եւ արհեստավարժ, ազգային արժեքներով առաջնորդվող իշխանություն, որն իր նվիրումով եւ աշխատանքով ի վիճակի կլինի դուրս բերելու հայրենի երկիրը բարդ իրադրությունից, երաշխավորելու հայրենիքի անվտանգությունը, հետապնդելու ազգային մեր իրավունքները եւ ապահովելու մեր ժողովրդի արժանապատիվ կյանքն ու զարգացումը Հայաստանում եւ Արցախում: Հայրենիքի լուսավոր գալիքի կերտման գործում Նորին Սրբությունը կարեւորեց նաեւ Սփյուռքի դերակատարությունը՝ իր հսկա ներդրումով:

Վերջում Հայրապետն աղոթք բարձրացրեց համայն մեր ժողովրդի բարօրության, Հայաստան ու Արցախ մեր հայրենիքի խաղաղության եւ անվտանգության համար՝ վերստին պատգամելով հոգեւոր դասին նախանձախնդիր լինել հավատավոր ժողովրդի հոգեւոր խնամքի իրականացման առաքելության մեջ:

Ժողովի ավարտին քահանայից ամենամյա հավաքի մասնակիցները հանդես եկան հայտարարությամբ:


Քահանայից ժողովի հայտարարությունը

«Մենք՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններս եւ Հայաստանի ու Արցախի թեմերում սպասավորող քահանաներս եւ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության զնդերեցներս, բարձր նախազաւոթյամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մայիսի 26-ին հավաքվեցինք Ս. Էջմիածնում՝ քահանայից ամենամյա հավաքի առիթով եւ՝

— Սուրբ Գայանե վանքում միասնաբար աղոթեցինք 103 տարի առաջ՝ մայիսյան հերոսամարտերի ժամանակ, հանուն ազգային մեր ինքնության պահպանության եւ մեր ժողովրդի ազատ ու անկախ կյանքի մարտնչած քաջորդիների, ինչպես նաեւ Արցախյան երկրորդ պատերազմում նահատակված հայորդիների, անհայտ կորած, գերության մեջ գտնվող եւ վիրավորում ստացած անձանց, տեղահանված արցախցի ընտանիքների համար: Աղոթքով հիշեցինք նաեւ «վասն հայրենեաց եւ վասն հաւատոյ» իրենց արյունը հեղած մեր հոգեւոր հոգեւոր եղբայրներին: Հայց բարձրացրեցինք առ Աստված Հայաստան եւ Արցախ աշխարհի անասանության, խաղաղության եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի անվրդով կյանքի համար:

— Անդրադառնալով Արցախյան պատերազմի հետեւանքով Հայաստանում եւ Արցախում ստեղծված ծանր իրավիճակին եւ առկա հիմնախնդիրներին՝ մեր մտահոգությունն ենք հայտնում հայրենիքում տիրող անցանկալի մթնոլորտի եւ խորացող քաղաքական ճգնաժամի առիթով: Կարեւոր ենք նկատում ազգային մեր ողջ ներուժի համախմբումը՝ ի խնդիր ծառացած արտաքին եւ ներքին մարտահրավերներ

նաեւ զոհ: Մեր զորակցությունն ենք հայտնում սահմանապահ մեր խիզախ եղբայրներին, հորդորում ՀՀ զինված ուժերին եւ պետական պատկան կառույցներին՝ համարժեք քայլեր ձեռնարկել՝ ապահովելու մեր երկրի տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության անձեռնմխելիությունը: Կոչ ենք անում նաեւ միջազգային համրությանը միջոցներ գործադրել՝ կանխելու տարածաշրջանը մեր պատերազմի մեջ ներքաշել ջանացող Ադրբեջանի սադրիչ գործողությունները: Խաղաղությանն այլընտրանք չկա, հանուն այդ խաղաղության է հեղվել



մեր ժողովրդի զավակների արյունը: Սակայն խաղաղությունը չի կարող կայուն իրողություն դառնալ արդարության ու իրավունքների ոտնահարման եւ անտեսման պայմաններում:

— Հայոց եկեղեցին, իբրեւ մեր ազգի կյանքում իր բազմադարյա ներկայությամբ եւ պատմական փորձառությամբ նվիրականացած հոգեւոր հաստատություն, շարունակում է պատասխանատվություն կրել Աստծո կողմից իրեն հանձնված հայ ժողովրդի եւ վերջինիս կողմից դարձրված փայփայած ազատ ու անկախ հայրենիքի համար: Այս պատասխանատվությունն օժտում է մեզ՝ իբրեւ հոգեւոր դաս, ամենայն

նախանձախնդրությամբ հետամուտ լինել հայրենիքի առջեւ ծառացած հիմնախնդիրների լուծմանը, անցանկալի երեւոյթների վերհանմանը եւ հաղթահարմանը:

Պատերազմում պարտության, հասարակության մեջ տիրող անվստահության տրամադրությունների հաղթահարմանն ի խնդիր՝ ՀՀ կառավարության հրաժարականով պայմանավորված հայրենի երկրում անցկացվելու են մեր խորհրդարանական ընտրությունները: Այս պայմաններում մեր սրբազան պարտքն է առավել քան երբեւէ զորացնել մեզանում հոգեւոր եւ ազգային արժեքները, որպեսզի քաղաքական այս ընտրապայքարում տեղ չգտնեն քրիստոնյա ժողովրդին անհարկ եւ անընդունելի իրավիճակներ՝ հանգեցնելով մեր ազգային կյանքում մեր ցնցումների եւ ձախողումների, պառակտումների ու պարտությունների: Ամսիաբանությունը մայրն է բոլոր չարիքների:

Վեր մնալով բոլոր տեսակի հատվածական շահերից՝ հորդորում ենք մեր ժողովրդին՝ հեռու վանել եղբայրատյացությունն ու անհանդուրժողությունը, թշնամանքն ու վրեժխնդրությունը, չտրվել կեղծիքի ու անարդարության ազդեցություններին, փոխարենը՝ զգեստավորված արդարատեսությամբ, ողջախոհությամբ եւ ապագայի հանդեպ անձնական պատասխանատվության զգացումով՝ խղճի մտոք մասնակցել ընտրություններին: Հայոց պատմության այս օրհասական հանգրվանում, երբ փորձվում են մեր ժողովրդի հաստատականությունն ու ազատ կյանքի գիտակցությունը, իրավունք չունենք մեղանչելու անտարբերությամբ մեր հայրենիքի, որով եւ մեր համայն ազգի վաղվա օրվա հանդեպ:

Աղոթում ենք, որ ամենագոր Աստված Իր ողորմությամբ ազգիս համախումբ պահի եւ իմաստություն պարգևի, որպեսզի, Ամենայն Հայոց Հայրապետի մաղթանքի համաձայն, առաջիկայում մեր ժողովրդի ազատ կամարտահայտությամբ ձեւավորվի հայրենամարտ, ազգասեր եւ արհեստավարժ, ազգային արժեքներով առաջնորդվող իշխանություն, որն իր նվիրումով եւ աշխատանքով ի վիճակի կլինի դուրս բերելու հայրենի մեր երկիրը բարդ իրադրությունից, երաշխավորելու հայրենիքի անվտանգությունը, հետապնդելու ազգային մեր իրավունքները եւ ապահովելու արժանապատիվ կյանքն ու զարգացում մեր ժողովրդի համար Հայաստանում եւ Արցախում»:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի



րի արժանապատիվ հաղթահարման, իրավիճակի կայունացման եւ ներկայիս պայմաններում հայրենիքի տեսլականի եւ հետագա զարգացման ուղեւշման:

— Դատապարտելի ենք նկատում այն փաստը, որ հակառակ նոյեմբերի 10-ի եռակողմ հայտարարությամբ ստանձնած պարտավորությունների եւ միջազգային մարդասիրական իրավունքի մորմների՝ Ադրբեջանը, շարունակելով որեւէ արդարացում չունեցող իր անմարդկային քաղաքականությունը, ազատ չի արձակում հայ ռազմագերիներին, ենթարկում է խոշտանգումների եւ նվաստացումների:

— Դատապարտում ենք Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում Արցախի թեմի տաճարների եւ հայկական պատմամշակութային ժառանգության հարցում որդեգրված մերժելի ընթացքը: Թե՛ պատերազմի օրերին, թե՛ հետպատերազմյան շրջանում արձանագրվեցին հայոց սրբատեղիների թիրախավորման, պղծման եւ ոչնչացման փաստեր: Ավելին՝ Ադրբեջանի իշխանությունները կեղծ օրակարգ են ձեւավորում հոգեւոր ժառանգության շուրջ՝ փորձելով վիճարկել դրա հայկական պատկանելությունը եւ այն վերագրել ուղիական քրիստոնեական փոքրամասնությանը՝ վերջինիս ներկայացնելով որպես հնագույն Աղվանքի կրոնամշակութային ժառանգության իրավատեր:

— Խոր մտահոգությամբ ենք հետեւում Հայաստանի Հանրապետության սահմաններին՝ Գեղարքունիքում եւ Սյունիքում ստեղծված իրավիճակին, ադրբեջանական զինված ուժերի ոտնձգություններին եւ սադրանքներին, որոնք ուղղակի սպառնալիք են մեր հայրենիքի եւ սահմանամերձ բնակավայրերի անվտանգությանը: Ցավոք, երեկ մեր դիրքերի ուղղությամբ արձակված կրակահերթերի հետեւանքով ունեցանք


1918 թ. մայիսյան հերոսամարտեր. հայ ժողովրդի Հայրենական մեծ Պատերազմը եւ միասնական ոգու հրաշակե՛րս հաղթանակը

Սկիզբը՝ թիվ 9

1918 թ. մայիսյան հերոսամարտերի շղթայում նշանակալի տեղ ունի Շիրակի գոյամարտը:

1918 թ. մայիսի 16–27-ը հաղթական մարտեր են մղվել Սոգյութլու (այժմ՝ Սառնաղբյուր) գյուղի ճակատում: Սոգյութլու գյուղում հավաքվել էին տասնյակ հազարավոր անպաշտպան փախստականներ: Պետք էր շտապ նրանց տեղափոխել մինչև թուրքերի հայտնվելը: Գյուղի «Յուվեյ» օդայում հավաքվում են հեղինակավոր մարդիկ, որոնց թվում էին Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից սպաներ Նիոյի Սարգիսը, Աթաշի Եղիշը, Խչոյի Սերոբը, շարքայիններ Սնեի Սմբատը, Յարուփի Մարալովը, Քոչոյի Թորոսը եւ ուրիշներ: Խնդիրը համակողմանի եւ մանրամասն քննարկելուց հետո որոշվում է նախ ապահովել տեղաբնակների ու փախստականների տարահանումը դեպի Էջմիածին եւ Երեւան: Իսկ ովքեր ունակ էին գեմք բռնելու, ընդգրկվեցին գյուղի պաշտպանության գործում: Կազմակերպվեց դիմադրություն, պաշտպանվողներն ունեին միայն մեկ զնդացիր եւ զինված էին «Մուսին» հրացաններով: Ձեռավորված դիմադրական ճակատին միացան նաեւ Շիրակի եւ Արագածոտնի գյուղերում ապաստանած հազարավոր արեւմտահայ գաղթականներ: Գաղթական կամավորներով համալրվեցին կռվողների շարքերը: Այսպես՝ դեռ մայիսի 5-ին Տարոնի 500 կամավորները Սասունցի Մանուկի եւ Մուշեղի գլխավորությամբ գրավեցին Ներքին Թալինի բերդը: Նրանք կարողացան Արագածի լեռնազանգվածը մաքրել թուրքերից ու թաթարներից, ինչը մեծ դեր խաղաց Սարդարապատի հաղթանակի գործում: Միայն դիմադրության 7-րդ օրը՝ մայիսի 22-ին, երբ Էջմիածնից եկած կապավորը տեղեկացնում է, որ համազորագիները բարեհաջող տեղ են հասել, իրենց պարտքը խիզախությամբ կատարած պաշտպանները թողնում են գյուղը եւ հեռանում Էջմիածին: Սոգյութլուի դիմադրությունը պատվի ու ազատության համար մղված պայքարի փայլուն օրինակ է:

Թուրքերին հերոսաբար դիմադրում է



Մաեւ Մուլա Գյոքչա (այժմ՝ Մարալիկ) գյուղը՝ Ալեքսանդրապոլի գավառի չորրորդ գավառամասի կենտրոնը: Այստեղ կռիվները ղեկավարում էին Առաքել Սիմոնյանը եւ Աղանիկ Աղբալյանը: Թուրքերը, չկարողանալով ընկճել 50–60 հոգանոց խմբի հերոսական դիմադրությունը, հրաժարվում են հետագա մարտական գործողություններից:

Ալեքսանդրապոլը գրավելուց հետո թուրքական չորրորդ զորախումբը, Յաղուբ Շեքի փաշայի գլխավորությամբ, մայիսի 21-ին հարձակվեց Սարդարապատի ուղղությամբ՝ Երեւան ներխուժելու նպատակով: Թուրքական այդ զորախմբի կազմում էին 36-րդ հետեակային դիվիզիան, հարվածային եւ սակրավորների մեկական գումարտակներ, հեծյալ գունդ, 1500 հեծյալ քոդեր, հրետանային մարտկոց՝ 40 հրանոթով:

Մայիսի 22–29-ը Արագածի լանջերից մինչեւ Արաքս, Սարդարապատից մինչեւ Սեւան գիշեր-ցերեկ անդադար, տագնապալի ու սարսափալի զոհանջում էին Արատայան երկրի բոլոր եկեղեցիների զանգերը: Ժողովուրդը զինվում եւ օգնության էր շտապում կանոնավոր զորամասերին: Սարդարապատի պաշտպանության կազմակերպումը Թ. Նազարբեկյանը հանձնարարել էր «Երեւանյան զորախմբի» հրամա-

նատար զեմերալ Մովսես Սիլիկյանին, որի զորախմբի կազմում էին 2-րդ հրաձգային դիվիզիան (առանց 7-րդ եւ 8-րդ գնդերի), 3-րդ հետեակային բրիգադը (Վանի 1-ին եւ 2-րդ գնդերը, Մակուի հետեակային գումարտակը) եւ 2-րդ հեծյալ բրիգադի 1-ին գունդը: Պաշտպանական միջոցներ էին ձեռնարկվել Մաեւ Կոդբի եւ Իգդիրի ուղղությամբ: Այս ուղղությամբ դեպի Երեւան շարժվող թուրքական 5-րդ եւ 12-րդ դիվիզիաների առաջխաղացումը կանգնեցնելու համար Մ. Սիլիկյանի կարգադրությամբ պայթեցվեցին Ղարաղալայի եւ Մարգարայի կամուրջները, Արաքսի ձախ ափին խրամատներ կառուցվեցին, եւ թույլ չտվեցին թուրքերին անցնել գետը: Գնդապետ Տիգրան Բաղդասարյանի հետեակային 3-րդ բրիգադը դիրքավորվել էր Նախիջեւան–Շարուր ուղղությամբ: Սարդարապատի զորախումբը, զնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանի հրամանատարությամբ, դիրքեր էր գրավել Սարդարապատի ուղղությամբ հարձակվող թուրքական զորախմբին դիմակայելու համար, իսկ 6-րդ հրաձգային, 2-րդ հեծյալ եւ պարտիզանական հեծյալ գնդերին հանձնարարվել էր սահմանապահ գումարտակի աջակցությամբ փակել Բաշ Ապարանից Երեւան շարժվող թուրքական

9-րդ դիվիզիայի ճանապարհը: Թիկունքի եւ Երեւանի պաշտպանությունը ղեկավարում էր Արամ Մանուկյանը:

Թուրքական բանակի առաջապահ ուժերը մայիսի 21-ին գրավել էին Սարդարապատ կայարանն ու նույնանուն գյուղը (Յուվեյներ, այժմ՝ Սարդարապատ) եւ Գեշուլուն (այժմ՝ Մրգաշատ): Մայիսի 22-ին 5-րդ հրաձգային (հրամանատար՝ զնդապետ Պողոս Բեկ-Փիրումյան), պարտիզանական հետեակային (հրամանատար՝ Վասիլի Պերեկրյոստով), Իգդիրի հետեակային եւ Ձեթունի հեծյալ (հրամանատար՝ Սարգիս Սալիբեկյով) գնդերը Քյորփալուից (այժմ՝ Արշալույս) եւ Ղուրդուղուլիից (այժմ՝ Արմավիր գյուղ) անցնում են հարձակման, Ղամշլու (այժմ՝ Եղեգնուտ) գյուղի մոտ կոտորում թուրքերի դիմադրությունը, վերագրավում Սարդարապատ գյուղն ու կայարանը եւ հարկադրում թշնամուն նահանջել շուրջ 15–20 կմ: Սակայն երբ հայկական ուժերը դադարեցնում են հետապնդումը, թուրքերը վերադասավորում են ուժերը եւ ամրանում Արաքս կայարանի հյուսիսարեւմտյան շիմնի եւ Թուլքի բարձունքներում: Թուրքական հրամանատարությունը որոշում է համալրել Յաղուբ Շեքի փաշայի զորքը (մայիսի 22–26-ը մղված մարտերի ընթացքում զոհվել էր մոտ 3500 թուրք զինվորական), սակայն հայերը հետ են շարժում Շեքի փաշային օգնության եկող Մյուրսեյ փաշայի գլխավորած 5-րդ դիվիզիան: Հայկական հրամանատարությունը մշակեց թուրքերին վճռական հարված հասցնելու եւ ջախջախելու ծրագիր: Ստեղծվեց հարվածային զորախումբ (գնդապետ Կ. Հասան-Փաշայանի (Ղասաբբաշյան) հրամանատարությամբ. այդ զորախմբի կազմում էին Երզնկայի հետեակային գունդը, Մակուի առանձին գումարտակը, երկու էսկադրոն, խնուսի գնդի մեկ վաշտ եւ 4 հրանոթ), որոնք Պանդուխտի (Միքայել Սերյան) գլխավորած մշեցիների ջոկատի հետ շրջանցելով թուրքերին՝ մայիսի 27-ին թիկունքից հարվածեցին ոսոխին, միաժամանակ հայկական հիմնական ուժերը հարվածեցին ճակատից: Ծանր կորուստներ կրելով՝ թուրքական զորաբանակի մնացորդները խուճապահար փախան դեպի Ալեքսանդրապոլ: ➔ էջ 7



Սկիզբը՝ թիվ 8–9

Կյանքն իր անարդարությունների շղթայի մեջ կարող է պահել տարբեր մարդկանց: Սոցիալական անհավասարությունն ու նյութական կարիքն առավել են զգալ տալիս

Զարեհ Որբունու

այդ շղթայի ամրությունը: Նիք-Նիքը չարչարվում, ամեն գործ էր անում, բայց ստանում էր չնչին գումար: Վախի զգացումը չէր թողնում, որ նա համապատասխան գումար պահանջի տիրոջից: Իսկ այդ զգացումն առաջին հերթին պայմանավորված էր նրանով, որ հերոսը աստանդական կյանքով ապրող մարդ էր, իր ծննդավայրից հեռացել էր, ինչպես ծառից պոկված տերեւը: Եվրոպայի բարքերը նրան չէին հրապուրում, բայց ամեն դեպքում կարողանում էր համապագորյա հացը վաստակել իր աշխատանքով:

«Օտարականը» պատմվածքում եւս Որբունու հերոսները կյանքի դժվարին ճանապարհներով անցնող անհատներ են: «Կյանքը պայքար է» միտքն անցնում է ստեղծագործության բոլոր տողերով: Ժամանակին ընտանիք կազմելու, տուն կառուցելու,

երեխաներ ունենալու եւ երջանիկ ապրելու երազանքները հոգս են ցնդում կյանքի դժվարությունների եւ սիրո բացակայության պատճառով:

Պատմվածքի հերոսն ամուսնացել է, որդի ունի, բայց զգում է, որ փշովել է իր երա-

զանքների ու ցանկությունների աշխարհը. «Հիմա ամեն բանի մեջ անկա քանդում կը տեսնեի միայն: Սեւ շուկային մեջ՝ որում շնորհիւ իրենց ֆիզիքական գոյութիւնը ապահովուած էր ընդմիշտ, սիրոյ մեջ՝ որ տուած էր տղան իրենց հիմնած օճախին տեւողութեան այդ շոշափելի երաշխիքը: Եւ վերջապէս, սիրային իւրաքանչիւր մերձեցման մեջ ան կտեսնեի իր մարմնին քանդումը, անոր դանդաղ փութումը, եւ այսպէսով քիչ-քիչ հասած էր սիրոյ մերժումին» (2. Որբունի, Անձրեւոտ օրեր, Փարիզ, 1958, էջ 123):

Նյութական ծանր վիճակը, կեցության սուղ պայմաններն իրենց բացասական կնիքն են դնում մարդկանց մտածողության ու հոգեբանության, նաեւ զգացմունքների վրա: Մտահոգությունները խաբխուում են մարդու երջանկությունն ու ընտանիքի հիմքը, քանի որ ամեն ինչ մղվում է երկրորդական պլան, իսկ առաջնային խնդիր է դառնում կեցության հարցը, հանապազօրյա հացը վաստակելու հնարավորություն գտնելը: Մարդն իրեն օտար էր զգում իր ընտանիքում, օտարացել էր ընտանիքի անդամների նկատմամբ: Դժվար ու ծանր մանկության, որբանոցային կյանքի շղթան շարունակվում էր. «Այլեւս երազելու ատեն չէր: Կյանքը երազ չէր: Կյանքը պայքար էր, ըմբշամարտ էր, կռիվամարտ էր» (2. Որբունի, Անձրեւոտ օրեր, էջ 97):

Չնայած կյանքի դժվարություններին՝ պատմվածքի հերոսը, այնուամենայնիվ, ինչ-որ վաստակ ունեւ, կկարողանար դիմագրավել կյանքի հարվածներին ու առօրյա նյութական խնդիրներին, բայց սիրո բացակայությունը դրամի ուժով չէր կարող լրացնել: Շարունակ մտածում էր, թե ինչ գործ ունի կինն իր հետ: Օտարության զգացումը նրան հանգիստ չէր տալիս: Գրողն այն միտքն է հնչեցնում, որ մարդը զորեղ է իր հայրենիքում, նրա իրավունքներն այնտեղ պաշտպանված են: Այդ դեպքում վախերն ի չիք կդառնան:

Հայ գրողներից շատերն են իրենց ստեղծագործություններում քննության առարկա դարձրել հայ գյուղն ու գյուղացուն, ինչպես նաեւ սոցիալական խնդիրներով պայմանավորված՝ տեղ են տվել գյուղային ու քաղաքային կյանքի տարբերակմանը: Թունամյանը, Բակունցը, Մաթեոսյանը եւ Համաստեղն իրենց ստեղծագործություններում անդրադարձել են գյուղաշխարհին՝ իրենց ստեղծագործությունների հերոս դարձնելով հասարակ գյուղացուն: Գրողները նկարագրել են հայ գյուղացու առօրյան, շփումը միջավայրի ու բնության հետ, նրանց հոգսերն ու երազանքները, նահապետական ավանդույթների բախումը քաղաքակրթության որոշ երեւույթներին եւ այլն: ➔ էջ 5

Մուշեղ Գալշոյան

Սկզբը՝ թիվ 3—9

Թե՛ Թորոսի, թե՛ Դավոյի, թե՛ Օհանի արարմունքը ոչ թե խանգարված զգայախաբության հետեւանք է, այլ ամբողջ կյանքի մտասեւեռման արդյունք։ Սա նրանց կյանքի վերջին մխիթարանքն է։

Գալիս է փողփուշ Մելոյի հերթը, որը ձեռնափայտի չափ երկար չիբուխով խոյերին ծխել է սովորեցնում։ Բարեւոյ երիտասարդին ասում է. «Դու ի՞նչ ես, որ զիս կճանչնաս»։ Հետո իմանալով, թե երիտասարդը որ տոհմից է, սկսում է մի պատմություն նրա գերդաստանի մեծերի ու իր անցյալի մասին, խոսում ու մտաբերում առանձին դեպքեր այնպիսի մանրամասնությամբ ու ինքնամոռացությամբ, որ շրջապատի մարդիկ հանկարծ գլխի են ընկնում, որ Մելոն մոռացել է իրենց գոյությունը եւ իր մտքերի հետեւից ընկած՝ գնում էր դեպի իր գոյության սկիզբը. «Մոռացել էր մեզ, մոռացել էր իր տեղը, մոռացել էր, ոչ խոսում է...»։ Նրա ճամփան էլ մտովի Ծովասար էր տանում։

Ամսիջական անցումով այս հերոսների կողքին կանգնում է Բազե Առաքելը («Պատրանք»)՝ խոսքի տեր, հաստատական մի սասունցի, որը, պատրանքի մեջ ընկած, դարձյալ հայրենիքի համար մտովի կռիվ տալով, չի էլ զգում, թե ինչպես է սեղմում խզակոթը ձյան մեջ խրված հրացանի ձգանը եւ իրեն դարձնում թշնամու համար պահված զնդակի զոհը։ Այսպիսի մահ վիճակվեց նաեւ պատմվածքի հեղինակին։ Ձարմանալի է պահի ու վիճակի ճշգրիտ կանխազգացողությունը։ Համեմայն դեպս, պատմվածքը գրելիս Գալշոյանն իր հերոսի հետ մեկտեղ հոգեբանորեն արդեն ապրել էր այդ մահի։

Մահվան պահին Բազե Առաքելի փակ կոպերը ժպտում էին՝ նա էլ այս աշխարհից գնում էր այն համոզմունքով, որ իր կռիվը կռվեց մինչեւ վերջ։

Այս ամբողջ շարքին ուղեկցում է նաեւ մի դառն զգացողություն՝ խորացված հատկապես «Մեղապարտը» պատմվածքում։ Դա ազգային ցավի չհասկացվածությունն է։ Երբ օտարին պատմում ու բացատրում ես, թե ինչ է հայրենիքի կորուստը, բայց նա այդպես էլ չի հասկանում կամ չի

ուզում ըմբռնել։ Այս ցավը դեռեւս Վ. Տերյանն է արձանագրել. «Մեզ չի հասկանա օտարերկրացին, // Մեզ չի հասկանա սառն օտարուհին»։ Հայրենիքի անսահման խոր զգացողություն, երբ օտարության մեջ հայր հայի է հանդիպում եւ սիրտը բացելու, ամբողջ կյանքի գաղտնիքը նրան վստահելու հետ մեկտեղ նաեւ ասում. «Դու իմ էրգիրն ես... Քաղաքն օտար, քաղաքի լեզուն ու մարդիկն օտար, փողոցն օտար, ու տունն օտար, ու հարսն օտար, թոռնիկն իր խելքը կնոջ ու գինու տված ու անծանոթ, ու տան մանրիկ երեխեքի լեզուն օտար ու անծանոթ... Դու իմ էրգիրն ես»։

Այս չհասկացվածության ցավը, որ կրկնապատկում է պարտությունն ու կորուստը, կրկնապատկում է նաեւ վրեժը։ Այս զգացողության պահին են ծնվել «Գինարբ ծաղիկ» պատմվածքի այս տողերը.

«—Պապի, ասկյարն ի՞նչ է։— Ասկյարը սալդաթ է։— Բա սալդաթն ի՞նչ է։— Սալդաթը ասկյար է»։ Չհասկացվածություն վերից ու վարից։ Ահավոր մի պատիժ, որ ժամանակակից սերունդը տեսավ արցախյան շարժման առաջին օրերին ու ամիսներին՝ նկատի ունենալով ԽՄԿԿ Կենտկոմի հակա-հայկական ամբողջ քաղաքականությունը։ Այսպես Գալշոյանի այդ պատմվածքը հին ցավի նոր հուշեր է արթնացնում, որովհետեւ քաղաքականությունը ինչպես երեկ, այնպես էլ այսօր մոլորում է, բայցեւ նույնն է ազատության սպասումը։

Այս պատմվածքների մեջ աստիճանաբար առանձնանում են այլ հերոսներ եւս, որոնց ներքին կռիվը նաեւ իրենց հոգեւոր ու բարոյական անկախության համար է։ Այդպիսին է հաշվետար Ներսեն՝ համանուն պատմվածքի գլխավոր դեմքը, որը կեսգիշերին գնում է շրջկոսպի մախազահ Վիրաբ Եգորիչից հետո է պահանջում մի քանի ժամ առաջ նրա ծննդյան հանդեսին իր ասած կենացը, որովհետեւ կենացատերն արժանի չէր իր խոսքին, եւ ինքը չի ցանկանում, որ իր սխալի վրա լույսը իջնի բացվող օրվան։ Ներսեն իրեն հարամված է զգում, որովհետեւ, սեղանակիցներին նմանվելով, մի պահ կորցրել է զգոնությունը եւ անարդար բան ասել, ի՞նչ գիտե՞ գուցե հաճոյացել, անգամ՝ քծնել։

Սեղանի վրա էլ Ներսեն անհամգիստ էր։ Վիրաբ Եգորիչի հասցեին շարունակվող կենաց-մաղթանքների թունդ պահին նա ցած-րածայն նետում է հարեւանին. «Հինգ ժամ է կխմի՞նք, ու էդ կենաց չալածմի՞լ»։ Բայց ինքն էլ ամոթից վերջինը կանգնում է սեղանի՝ իր տեղում եւ ասում. «Ժողովուրդ, էս մարդ շատ հայրենասեր մարդ է։ Հա, դուք ինձ հարցրե՛ք՝ հայրենասեր ու պատվավոր մարդ է։ <...> Ազնիվ հայրենասեր ու արդար մարդ է»։ Այս խոսքերին հաջորդող «ապրեսից» ու «մալադեցից» հետո՝ տուն վերադառնալիս, Ներսեն հոգեպես հիվանդանում է, այրվում ամոթից, որովհետեւ ծախել էր հոգին։ Ի վերջո, գյուղից մինչեւ շրջկենտրոն ոտքով մի կերպ ճանապարհը կտրելով՝ կանգնում է իր մեծավորի առաջ ու՝ «Իմ ոտք էլ քու շեմից ներս չի մտնի։ Ես եկա զիմ խոսքն ետ առնիմ ու էրթամ... Ես զիմ բաժակաճառն ետ է կառնիմ, զիմ գոլքն ետ է կառնիմ... Դու ի՞նչ հայրենասեր»։

Չկաշկանդվող ազատության եւ չվիրավորվող արժանապատվության համար իր խելքի տերը չէ նաեւ խութեցի Ափրեն։ Նա մեծ դժվարությամբ իր ձեռքով տախտակում է սենյակի հատակը, բայց երբ կինը դիտողություն է անում՝ թե ուր ես ցեխոտ սապոգներով ներս մտնում, նույն հանգստությամբ նա վերցնում է լինգն ու քքանք էլ քանդում, դուրս թափում իր խփած տախտակները։ Սա հենց ծուռ սասունցու կողմ է, բայց արդար կողմ՝ ինչպես թե իմ ստեղծածի վրա դու ինձ խելք ու խրատ սովորեցնես։

Այս բնույթի պատմվածքներն ընդարձակում են հերոսների հոգեւոր աշխարհը, նպաստում բացահայտելու նրանց բնավորության նորանոր կողմեր։

Կան նաեւ պատմվածքներ, որոնցում



խորացվում է բնազգացողությունը՝ հոգեւոր եղբայրությունն ու հարազատությունը հորին, քարին, թփին, ծառին, ջրին, եզանն ու գառներին։ Մի տեսակ տիեզերական համազգացողություն, երբ մարդն ինքն իրեն է տեսնում Աստծու ստեղծած ամեն ինչի տեղում եւ իրեն հավասար դիտում Աստծու ստեղծած մնացած աշխարհը։ Այս գիծը հատկապես խորությամբ է արտահայտված Համաստեղի, Բակունցի ստեղծագործություններում։

Գալշոյանի «Թաթոն» պատմվածքի համանուն հերոսը եզան աչքերի արտացոլանքի մեջ տեսնում է մահացած հոր աչքերի արտահայտությունը՝ «Եզան աչքերից համառորեն նայում էր հայրը... Դու իմ Հյո հերն ես, իմ ջոջ եզ, դու իմ Հյո հերն ես»։ Գ. Մահարու՝ Չալոյի եւ առաջին սիրո մասին պատմող բալլադում այդպես սիրած աղջկա աչքերից ասես մանկության տարիների շունն է նայում՝ նույնքան հարազատ, նույնքան իրենը.

*Օ, սեր իմ, սեր իմ... ինձ հառել էին
Բիբերը նրա մարուն.
Չալոն է նայում նրա աչքերից,
Չալոն է տխուր նայում...*

Սա հենց ամեն ինչի փոխներթափանցված հարազատությունն է։ ➡ էջ 6, 8

պապրմվածքները

← էջ 4

Գյուղագիրների հերոսներն ամուր կապված են իրենց հողին։ Նախաստեղծ, անբացատրելի հարազատություն ունի նրանց պատկերած աշխարհը։ Արտաքին աշխարհից հետ մնացած, լեռների մեջ ծվարած գյուղերի, ունեցած բարդ ու բազմաբնույթ, միջնորդավորված կապերից բացի՝ գոյություն ունի ներքին, անմիջական ու ավելի ամուր կապերի մի ամբողջություն։


Արեւելահայ ու արեւմտահայ, այսպես կոչված, գյուղագրությունն ստեղծել էր իր ավանդները, երբ 1920—1930-ական թթ. այդ ավանդները շարունակողներ գտնվեցին երկու հատվածների գրականությունների մեջ էլ, թեւս այս դեպքում արեւելահայ ու արեւմտահայ անվանումների փոխարեն ունենք խորհրդահայ ու սփյուռքահայ անվանումները։ Արեւելահայ գյուղագրության բնական շարունակությունն էր խորհրդահայ գրականության առաջին տասնամյակների գյուղագրությունը։ Աբովյանի, Պռոշյանի, Մուրացանի, Թումանյանի եւ ուրիշների ավանդների նոր զարգացումն էր Ջորյանի ու Բակունցի ստեղծագործությունը՝ նոր ժամանակների, նոր հոգեբանության հավելումով։ Արեւմտահայ գյուղագրության հավատարիմ շարունակողները եղան Համաստեղը, Հակոբ Մճուրին, Վազգեն Շուշանյանը եւ ուրիշներ։

Չ. Որբունու «Երանելի գյուղը» պատմվածքի հերոսն ատաղձագործ է, մարդ, որն իր առօրյա հացը վաստակում է իր քրտինքով։ Փոքրիկ գյուղակի միակ կառավարատ փողոցում իր արհեստանոցն ուներ եւ աշխատում էր. «Հեռուէն եկող էլեկտրական սղոցի մը զիլ ճռինջը, որ ատաղձագործի մը ներկայութենը կը մատնէր, արեւոտ օդին մէջ զուարթ յանկերգի մը պէս կ'երկարէր։ Երբ դրան մը առջեւ փայտի տաշեղներու դէզ մը տեսայ, կեցուցի կառքս, արհեստս յիշեցնող պայուսակը ձեռքիս՝ արհեստանոց մտայ» (Չ. Որբունի, *Անձրեւոտ օրեր, Փարիզ, 1958, էջ 121*)։

Ատաղձագործն աշխատում էր, նա ուշադրություն չի դարձնում արհեստանոց մտած անծանոթին, որը նրան ինչ-որ ապրանքներ է առաջարկում գնել։ Արհեստանոցի բոլոր անկյուններում թափթփված փայտի կտորներ կային, որոնցից անգամ հնարավոր չէր գուշակել, թե ինչ իրեր է պատրաստելու արհեստավորը։ Քանի որ շատ է ցանկանում ինչ-որ բան վաճառել, սկսում է հարցեր տալ արհեստավորին։ Անծանոթի հետաքրքրությունը շարժում է հատկապես մի անկյունում դրված դագաղը։ Նա ասում է, որ դագաղի համար խաչեր, կոթեր է վաճառում, իսկ ատաղձագործը հեզմական ժպիտով պատասխանում է, որ ինքը դագաղ չի շինում. «Այս գյուղի մէջ

մարդ չի մեռնիր, ըսաւ, խորհրդաւոր տեսք մը առնելով եւ աչքերը վրաս բարձրացուցած» (Չ. Որբունի, *Անձրեւոտ օրեր, էջ 121*)։

Ատաղձագործը պատմում է, թե ինչպես մի օր գյուղացիներից մեկը խնդրել է ծերունի Մառմոյի համար դագաղ շինել, քանի որ նա մահաւմեծ վիճակում էր, անգամ քահանա են բերել նրա համար։ Ինքը չի ցանկացել դագաղ շինել, առաջարկել է գնալ եւ քաղաքից առնել, սակայն քանի որ քաղաք գնալը գյուղացիների համար դժվար էր եւ գումարի հետ կապված, դրա համար խնդրանքով դիմել են ատաղձագործին։ Հաջորդ առավոտյան ծերունու տղան եկել է հայտնել է, որ հայրն իրենց գլխին խաղ է խաղացել եւ մեռնելու ցանկություն չունի։ Իր աշխատանքային գործունեության հիսուն տարվա մէջ պատրաստված միակ դագաղն էր, որն այդպես էլ հասցեատեր չունեցաւ։ Ինչպէս կարող էր նշված «Երանելի գյուղում» մարդ չմեռնել։ Խնդիրն այն էր, որ մարդիկ լոււն էին գյուղը, գնում, բնակվում էին քաղաքում, գյուղը դատարկվել էր, քիչ մարդիկ էին մնացել, դրա համար էլ գյուղում մարդիկ չէին մեռ-



նում։ Անծանոթի մարմնով սարսուռ է անցնում. «Դագաղ մը, երբ մէջը մեռել չկայ, աւելի տխուր է, աւելի պաղ» (Չ. Որբունի, *Անձրեւոտ օրեր, էջ 124*)։

Շարունակելի

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Դոկտոր Գեորգ Աբգարյանը եւ նրա հայրենական գերդաստանը

Սկիզբը՝ թիվ 9

Մահից առաջ՝ Չարենցի օգնության կանչի վերաբերյալ հողվածի հեղինակ Գեորգ Աբգարյանը, արտահայտում է իր խորհմաստ մտորմունքը հայ ժողովրդի միասնության չարենցյան փրկագործ պատգամի մասին։ «Ինձ այնպես է թվում, թե փրկության կանչը Չարենցի անհայտ գերեզմանից բարձրանալով՝ լսվում է նաեւ այսօր։ Սակայն այսօր բանաստեղծն օգնության է կանչում ոչ թե իր կյանքը փրկելու խնդրանքով (այդ կյանքն այլեւ չկա), այլ՝ «Ո՛վ, հայ ժողովուրդը» վերածնելու ակնկալությամբ...» (նույն տեղում)։

Ամենափոքր եղբոր՝ Աշոտ Աբգարյանի (1927—1950 թթ.) ռազմական ծառայության մասին հակասական տեղեկություններ են մնացել։ Իմանականում այն պատճառով, որ նրա ծառայության տարիները համընկել են Գեորգ Աբգարյանի գերության եւ հետպատերազմյան աքսորի հետ։ «Մի շաբաթվա ընթացքում մայրն ստացավ երկու սեւ թուղթ։ Իսկ Աշոտի՝ մեքենավար որդու մասին, փոստատարը ոչինչ չասաց,— գրում է Սասուն Գրիգորյանը,— Աշոտը պատերազմի բռնկված անցավ եւ վերադարձավ գյուղ՝ վիրավոր, հյուծված եւ առողջությունը քայքայված, տակավին երիտասարդ բաժանվեց կյանքից» (Սասուն Գրիգորյան, էջ 234)։


Աշոտի մասին մի այլ, ավելի իրական պատմություն հաղորդում է գրող ակնարկագիր Ալբերտ Յովհաննիսյանը իր գրքում։ «Վեցերորդը եւ ամենափոքրը՝ Աշոտ Աբգարյանը, զորակոչվեց պատերազմից երեք տարի հետո։ Ծառայում էր Սակրային առանձին գումարտակում։ Չորացրվելու էր 1950-ի ապրիլին։ Տունդարձին մնում էր մեկ ամիս։ Այդ տարի Սմոլենսկի մարզում գարունը շուտ սկսվեց։ ...Հսկայական մի հեղեղ, լեռնակուտակ ալիքներով տափանցեց ու տարավ Յարցեւոյի անտառամերձ հովտի հաստ հողաշերտը։ Հեղեղները լույս աշխարհի հանեցին խորանիստ ականադաշտը։ Ֆաշիստական սվաստիկայով դարանակավ ականները մահագույժ տեսքով շարվել էին կողք կողքի։ Դանդաղ գործողության բազմափուլային ակններ էին։ Հսկայական մի տարածություն, որը ներառում էր ականադաշտը, շրջափակվեց պահակազորով։ ...Սակրային

գումարտակը մարտական առաջադրանք ստացավ։ Ականազերծմանը ձեռնամուխ եղան բոլոր վաշտերն ու դասակները։ ...Հսկայական մի տարածություն արդեն վնասագերծվել էր, երբ անտառի փեշին լսվեց ահարկու պայթյունը։ Տղերը անգոլուշորեն շուտ էին տվել ականադաշտից հեռու ընկած ռելի մի կտոր, որի տակ դեռ մնում էին երկու լիցքավորված ականներ։ Չոհվեցին չորս սակավորները։ Այդ տխուր միջադեպից մեկ շաբաթ պիտի անցներ, որպեսզի գումարտակի հրամանատար, փոխգնդապետ Դիմիտրեւ սրտառույն մամակով տեղեկացներ՝ «Ձեր որդին՝ շաբաթին Աշոտ Վահագի Աբգարյանը, մարտական կարեւոր առաջադրանքը կատարելիս զոհվեց հերոսի մահով։ Հետմահու պարգևատրված է «Խիզախության համար» մեդալով։ Հրամանատարության որոշմամբ շաբաթին Աշոտ Աբգարյանի դիակը փոխադրվում է իր ծննդավայրը։ Թաղման ծախսերը կատարում է զորամասը։ Ընդունեք, թանկագին բարեկամներ, մեր խորին ցավակցությունը» (Ալբերտ Յովհաննիսյան, էջ 306)։

2020 թվականին լրացավ բանասեր, պատմաբան, ձեռագրագետ, աղբյուրագետ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, ԽՍՀՄ գրողների միության անդամ, Մաշտոցի Մատենադարանի հնագույն աշխատող Գեորգ Վարազի (Վահանի) Աբգարյանի ծննդյան 100-ամյակը։

Գեորգ Աբգարյանը ծնվել է 1920 թվ. սեպտեմբերի 14-ին Ալեքսանդրապոլի գավառի Չոռն գյուղում (ներկայումս՝ Շիրակի մարզ)։ 1937 թ. ավարտել է Լենինականի №50 երկաթուղային միջնակարգ դպրոցը եւ նույն տարում ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ։ 1940 թվից Գեորգ Աբգարյանն աշխատել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի բնագրերի ուսումնասիրման եւ հրատարակման բաժնում, որը գործում էր այն ժամանակ Հանրային գրադարանի շենքում։

21 տարեկան Գեորգը 1941 թվին 5-րդ



կուրսից զորակոչվել է ռազմաճակատ։ 1941 թ. օգոստոսից մինչև 1942 թ. հունվարը սովորել ու ավարտել է Բաքվի հետեւակային ուսումնարանը, ստացել էլետեմանտիկոչում եւ ականաճեւային վաշտի հրամանատարի տեղակալի պաշտոնով ուղարկվել ծառայության 263-րդ հրաձգային դիվիզիա։ 1942 թ. սեպտեմբերին «Красный Кавказ» հաժանավով Գեորգը, շատ հայրենակիցների հետ, օգնության է մեկնել Գեյնջիկի սեւծովյան ափը եւ մավաստիների զորամասի հետ մասնակցել թշնամու դեմ մղվող կատաղի մարտերին (Փայլակ Ենգոյան, էջ 84—85։ Տես նաեւ Սասուն Գրիգորյան, էջ 233)։

1942 թ. հոկտեմբերին Գեորգը վիրավորվել է ոտքից եւ գերի ընկել։ Ինչպես ինքն է գրել հետագայում. «...բեկորները խճճվեցին բազում կիլոմետրեր չափած ոտքիս կոշտ մկանների մեջ եւ չկարողացան այլեւս այնտեղից դուրս գալ։ ...Ընկերներ ենք դարձել։ Բայց, իհարկե, ես չեմ վատահոգում այսպիսի ընկերությանը»։ Մինչև 1945 թ. ապրիլ ամիսը եղել է Գերմանիայում եւ ֆաշիստական համակենտրոնացման ճամբարում կրել ռազմագերու դառն ճակատագիրը։ Գերության հոգեկան ու ֆիզիկական տաժանքի մեջ ցուլաց հույսի մի նշույլ՝ գերմանական հայագիտության պատկերը։ Իր հարուստ համալսարանական գիտելիքներով, բայց գյուղական դպրոցի անպաճույճ գերմաներենով, բախտի բերմամբ Գեորգը շահեց գերմանացի սպա, երիտասարդ հայագետ Ռոլֆ Ալեքսանդեր Մայերի (1909—1986 թթ.)

համակրանքը, որը լավ տեղյակ էր գերմանացի նշանավոր հայագետների գործերին։ Ինչպես Գեորգը էր պատմում հետագայում, երկուսով կազմեցին գերմաներեն-հայերեն բառարան, որը ոչնչացավ տպարանում 1945 թվականի ռմբակոծման ժամանակ։ Ահա թե որտեղից է գալիս գերմանական հայագիտության նկատմամբ այն նախասիրությունը, որը նրա առջեւ բացեց մի ուրիշ՝ ավելի բարձր Գերմանիա։ Գեորգի արտահայտությամբ՝ «Մինչև 1945-ի ապրիլը համակենտրոնացման տարբեր ճամբարներում նորից շարունակել է լեզու պայքար մղել հիտլերյան բարբարոսների դեմ» (Սասուն Գրիգորյան, էջ 233)։

1945 թ. ապրիլին Գեորգ Աբգարյանին հաջողվում է փախչել համակենտրոնացման ճամբարից ու միանալ դաշնակիցների զորամասերին։ «Ապրիլին դաշնակից պետությունների բանակները ազատագրեցին նաեւ մեր ճամբարը, ինձ բախտ վիճակվեց վերադառնալ մերոնց մոտ եւ ծառայել 93-րդ դիվիզիայում... Է, գլխովս անցածը որ լրիվ պատմեմ, մազերդ կճերմակեմ» (նույն տեղում)։

Դրանից հետո Գեորգ Աբգարյանը զորացրվել է եւ շարունակել իր կիսատ թողած կրթությունը համալսարանում։ 1946-ին ավարտելով ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետը՝ ընդունվեց ԳԱ գրականության ինստիտուտի ասպիրանտուրան։ Այստեղ նրա գիտական ղեկավարն էր անվանի բանահյուսագետ Կարապետ Մելիք-Օհանջանյանը, որը 1915—1917 թվերին նույնպես եղել էր Գերմանիայում եւ որպես ազատ ունկնդիր՝ սովորել Բեռլինի համալսարանում, եղել գերմանացի արեւելագետ, հայագետ, բանասեր, լեզվաբան, աշխարհագրագետ, Բեռլինի համալսարանի հայագիտական ամբիոնի հիմնադիր, պրոֆեսոր Յոզեֆ Մարկվարտի ուսանողը, բայց Համաշխարհային պատերազմն սկսվելու պատճառով երկարաձգվել էր Գերմանիայում մնալու ժամկետը, եւ Հայաստան էր վերադարձել 1920 թվին։

Ստալինյան վարչակարգը ռազմագերիներին դիտում էր իբրեւ հայրենիքի դավաճաններ, եւ հաղթական պատերազմին հաջորդած համատարած աքսորի ժամանակ՝ 1947 թվականի հոկտեմբերի 18-ին, Գեորգն անակնկալ ձերբակալվում է։ ➔ էջ 8

Մուշեղ Գալշոյան



➔ էջ 5

Իսկ Թաթն հարեւանից խնդրած եզների հետ չի կարողանում վար անել, որովհետեւ նրանց անունները չգիտի, նրանց հետ խոսել չի կարող, իսկ լուռ աշխատել չի լինի։ Այդ իսկ պատճառով վարատեղից հասնում է գյուղ, որ եզների անուններն իմանա եւ կարողանա աշխատանքն առաջ տանել։ Մարդու եւ բնության փոխհարաբերության

սարերում մնաց, չգաղթեց, մնաց։ Լինելով բան է... Չէր հավատում։ Իսկ Գինարը խատուտիկ աչքերով ժպտում էր։— Բու անուն Գինարը է։ Ծաղիկը գլխով արեց։ Ծաղիկը փնջելով՝ Բարսեղը մտածում էր, որ «Երգից ծանոթ է եկել, գյուղ պիտի տանի»։ Ու գյուղ է տանում, տնետուն բաժանում երկրից հիշատակ մնացած հարազատին։

Բայց հետո հուշերով արտն էլ են վարում եւ ավերում Գինար ծաղիկ տունը։ Իսկ ծաղիկը միայն այդտեղ էր աճում։ Խորհրդանշական պատկեր է, որ զգուշացնում է՝ մի վարեք հիշողության հովիտը, մի քանդեք հիշատակների կացարանը։

Բնաշխարհիկ մարդու վիրավորված արժանապատվությանը ցավ է ապրում Տոնեն («Շուկան»)։ Քաղաք է եկել ու ոչխար է բերել ծախելու։ Գալիս աջից-ձախից ոտքով խփում են ոչխարին, իբր թե լավ ու վատ են ջոկում, հետո փողը շարտում են երեսին՝ «Առ, գնա ապրի», եւ ոչխարը գցում մեքենայի մեջ ու տանում։ Իսկ ոչխարի առեւտուրը Տոնեի համար ոչ միայն ան եւ տո՛ւր էր, այլեւ, դրանից առաջ, մարդկային վերաբերմունք, բարեւ ու Աստծու բարին, խոսք ու զրույց։ Դա այդպես է, որովհետեւ Տոնեն ոչխարի հետ մեկտեղ մտել իր կյանքի մի մասնիկն էր ծախում, որովհետեւ Տոնեն ոչխարի հետ մեկտեղ ամիսներ շարունակ սար ու ձոր էր չափչփել, այդ ոչխարի հետ քնել ու արթնացել։ Այսինքն՝ Տոնեն՝ բնության մարդը, հարազատի վերաբերմունք է ակնկալում, որը չկա, որը վերանում է։

Աստծու առաջ գործած մեղքի զգացողություն է ունենում Հազրոն («Միայնակ ծառը»), որը ծառ էր կացնահարել, սպանել բնության գեղեցկությունը՝ բունը ուղիղ ու սլացիկ, սաղարթները՝ երկնքում։ Ու հիմա ներում է աղերսում, որ ձեռք է բարձ-

րացրել իր մմանի վրա, ուրեմն՝ ինքը մարդասպան է։

Բնագագացողության այս նույն ոգով Մոսեն («Դաշտապահը») խորհուրդ է տալիս նորեկ սերնդին, որ սովորեն բնության լեզուն, առանց որի, ինչքան էլ խելքի պաշարներ կուտակեն, կմնան թերու։ Սա դաշտապահի բաց գիրքն է, որը, ավանդ, այլեւ կարդացող չկա։

«Մարութա սարի ամպերը» գիրքն ավարտվում է «Մամփրե արքան» պատմվածքով, որը խտացում է այն ամենի, ինչ անում էր հենց ինքը՝ հեղինակը։ Այսինքն՝ գոնե գրով մոռացումից փրկել հայրենիքի հիշատակները, պատմության ճշմարտությունը եւ այն պահ տալ սերունդներին։ Հակառակ դեպքում թշնամին ամեն ինչ կհարմարեցնի իրեն, իրենը կդարձնի ոչ միայն քարտեզ, այլեւ ոգեղեն սրբությունները։ Այդ մտավախությամբ Մամփրեն օր ծերության սովորում է հայոց գրերը եւ գրոց հիշատակին հանձնում պատմության ճշմարտությունը։ Սա էւ Մամփրեի վրեժն է թալանչի Օսմանից, եւ իր ապրած կյանքի արդարացումը։

Ինչպես ամբողջ գիրքը, այնպես էլ վերջին պատմվածքը կտակ է ապագա սերունդներին, որ ասում է՝ այս է երկրի ու նրա զավակների ճշմարտությունը, հիշե՛ք, մի մոռացե՛ք եւ տե՛ր կանգնե՛ք ձեր կորստին։ ➔ էջ 8

Մերգեյ Շերվինսկին հայ գրականության թարգմանիչ



Սկզբը՝ թիվ 9

Շերվինսկու թարգմանական ժառանգության մեջ իրենց առանձնահատուկ տեղն ունեն հայ գրականությունից արված թարգմանությունները: Նախեառաջ անդրադառնանք Շերվինսկու՝ չափածո ստեղծագործություններից կատարած թարգմանություններին: 1915 թվականին, երբ կազմվում էր «Հայաստանի պոեզիան» անթոլոգիան, Շերվինսկուն համեմարարվեց թարգմանել հայազգի հեղինակների որոշ ստեղծագործություններ: Ի սկզբանե նրան թվում էր, որ հայ գրականության թարգմանությամբ զբաղվելը միայն մի ակնթարթ է իր գրական գործունեության մեջ լինելու, եւ պատկերացնել չէր կարող, որ Հայաստանը կարող է դառնալ իր երկրորդ հայրենիքը:

1915 թվականին՝ այդ ողբերգական տարում, հայ ժողովուրդը, որը նախկինում եւս շատ էր տառապել տարբեր զավթիչների պատճառով, կարելի էր ասել՝ ստացավ մահացու հարված: Շերվինսկին, անդրադառնալով կատարվածին, գրում է. «Հիշողությունը ասես ցանկանում է անհետ կորցնել այդ դեպքերի պատկերը, սակայն դրանք մոռանալը անհնար է: Հայոց արյան այդ գետերում, որոնք հոսում էին քաղաքներով

եւ գյուղերով, նաեւ շնորհալի բանաստեղծների՝ Դանիել Վարուժանի եւ Սիամանթոյի արյունն էր: Այն տարիներին ինձ՝ 23-ամյա երիտասարդիս, Բյուսուկը վստահեց այդ բանաստեղծների որոշ ստեղծագործությունների թարգմանությունը: Այդպես իմ ուսուցչի կամքով ես ներս մտա հայ գրականության ամբողջ արեւմտյան դարպասներից, եւ դուռը, սակայն, բացվեց արյունոտ բանալիով» (էջ 190):

Շերվինսկու կատարած թարգմանություններից Անթոլոգիայում գետեղվեցին շատ ու շատ հեղինակների՝ Ներսես Շնորհալու, Նահապետ Քուչակի, Ռաֆայել Պատկանյանի, Դեռնդ Ալիշանի, Լեւոն Շամբի, Սիամանթոյի եւ Դանիել Վարուժանի ստեղծագործությունների թարգմանությունները: Սակայն մեր ուսումնասիրության սահմաններում չենք կարող անդրադառնալ բոլոր այդ ստեղծագործությունների թարգմանություններին եւ ուստի կներկայացնենք միայն երկու հեղինակների, այն է՝ Դանիել Վարուժանի եւ Սիամանթոյի ստեղծագործությունների թարգմանությունները:

Շերվինսկու թարգմանությամբ Սիամանթոյի ստեղծագործություններից անթոլոգիայում գետեղվեցին երեք բանաստեղծություն՝ «Արցունքներս», «Հայրենի աղբյուր» եւ «Ափ մը մոխիր հայրենի տուն» գործերը: Անդրադառնանք «Ափ մը մոխիր, հայրենի տուն» բանաստեղծությանը: Նախեառաջ նշենք, որ 1907 թվականին լույս տեսավ Սիամանթոյի «Հոգեարքի ջահեր» բանաստեղծական շարքը, որտեղ գերակշռողը տառապանքի փիլիսոփայական վերապրումներն էին: Օրհասի տխուր մտորումների մեջ Սիամանթոն բազմիցս կարոտով վերհիշում էր հայրենի եզերքի գեղեցկությունն ու մանկության օրերի խայտառքները եւ միեւնոյն ժամանակ, սակայն, ողբում իր ժողովրդի դառը ճակատագիրը: Մի այդպիսի վերհիշմանտրում է նաեւ «Ափ մը մոխիր, հայրենի տուն» բանաստեղծու-

թյունը, որն ասես հայրենիքի ողբերգության դրամատիկ պատկերն է: Բերենք մի օրինակ բնագրից.

Ավանդ, ապարանքի մը պես մեծ էիր եւ ջրեղ, Ու ես՝ երդիքներուդ սպիտակ կատարեն, Աստղածորան գիշերներու լուսին հետ, Վարեն, ահեղավազ եփրատին կ'ունկնդրեի...

*Արցունքով, արցունքով լսեցի, որ ավերակ առ ավերակ
Քու լայնամիտս պատերդ իրարու վրա կործանեցին,
Սարսափի օր մը, կոտորածի օր մը, օր մը արյունի...
Ձեռք եզերող պարտեզիդ ծաղկներուն վրա...*

Ու մոխրացավ այն սենյակը կապույտ, Որուն որմերուն ետեւ եւ գորգերուն վրա Իմ երջանիկ մանկությունս կը հրծվեր, Եվ կյանքս կ'աճեր, եւ հոգիս իր թեւերը կ'առներ...

*Փշրեցամ, ուրեմն, այն հայելին ոսկեծիր, Որուն եթերային խորությամբ մեջ երազներս, հույսերս, սերերս եւ կամքս կարմիր,
Տարիներով, մտածումիս հետ, ցոլացին:
(Սիամանթո, Ըմտիր երկեր, Երեւան, 1957, էջ 105)*

Ավերված տունը, կորած ծննդավայրը եւ հայրենական պայծառ հիշատակները դառնում են հայրենիքի խորհրդանշանը: Թարգմանիչը պետք է կարողանար վերստեղծել հեղինակի հայրենիքը եւ իր համար օտար աշխարհը ընկալել հարազատի պես: Շերվինսկին գրում է.

*Увы! Ты, как дворец, велик был и богат,
И с плоской высоты твоих белых крыш,
Звездоточивой лишь настанет ночи тишь,
Внимал я, как внизу, шума, бежит Евфрат...*
*Я плакал, плакал я, узнав, что ныне ты—
Развалина, лежат обломки лишь одни...
То был день ужаса, и крови, и резни...
А около тебя цвели в саду цветы.*

*Теперь спаленная, там комната была
Вся голубая. В ней я ползал на ковре,
Там детство проводил в весельи и в игре,
И за спиной росли два радостных крыла.*

*Увы, то зеркало разбито, чей кристалл,
Сиявший золотом, в своих лучах таил
Мои мечты, любовь, и чаянья, и пыл,
Где воля красная, где разум мой блистал.
(Поэзия Армении с древнейших времен до наших дней, под ред. В. Брюсова, Москва, 1916, էջ 477):*

Թարգմանությունն ընթերցելիս թվում է, որ թարգմանիչը հենց բնագրի հեղինակն է, որ իրոք լալիս է ու ցավ ապրում հայրենի տան կորստից. «Я плакал, плакал я, узнав, что ныне ты — развалина, лежат обломки лишь одни»: Շերվինսկին կարողացել է փոխադրել բանաստեղծության մեջ տիրող ափսոսանքի ու տխրության տրամադրությունը: Այդ առումով, պետք է նշել, որ տեղին է օգտագործված «Увы» բացականչությունը, որը իր էությամբ լիովին համապատասխանում է բնագրում տեղ գտած «ավաղ» բառին եւ իր մեջ կրում մի մեծ վիշտ: Տաղանդաշատ թարգմանիչն հաջողվել է նաեւ վերստեղծել աստղածորան գիշերների, կապույտ սենյակի, ոսկեծիր հայելու եւ կարմիր կամքի պատկերները, որոնք հակադրությունն են անհոգ անցյալի ու արյամբ ներկված կարմիր ներկայի:

Ուշադրության է արժանի նաեւ բնագրի եւ թարգմանական տարբերակի տաղաչափական տարբերությունը: Հայտնի է, որ Սիամանթոն իր բանաստեղծություններում հանգավորում չէր կատարում. գրել է ազատ ոտանավորներ, սակայն Շերվինսկու թարգմանական տարբերակում առկա է օղակաձեւ հանգավորում, որի դեպքում առաջին տողը հանգավորվում է չորրորդ տողի հետ, իսկ երկրորդ եւ երրորդ տողերը՝ միմյանց հետ՝ abba: Պետք է նշել, որ թարգմանելիս Շերվինսկին միտումնավոր է համագավորել բանաստեղծությունը՝ ռուս ընթերցողին այն առավել հասկանալի, ինչպես նաեւ հնչեղ դարձնելու նպատակով:

→ էջ 8

1918 թ. մայիսյան հերոսամարտեր. հայ ժողովրդի Հայրենական մեծ ռաւերազմը եւ միասնական ոգու հրաւակերս հաղթանակը

← էջ 4

Ճակատամարտն ավարտվեց թուրքական զերակշիռ ուժերի դեմ տարած լիակատար հաղթանակով: Սարդարապատի ճակատամարտը հայ ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն էջերից է:

Թուրքական երրորդ զորախումբը (Կովկասյան 9-րդ հետեւակային դիվիզիա) հարձակման ուղղություն էր վերցրել Ալեքսանդրապոլից դեպի Բաշ Ապարան: Թուրքական հրամանատարությունը որոշել էր 9-րդ դիվիզիան ուղարկել Բաշ Ապարան՝ փորձելով Երեւան արշավել հյուսիսից եւ դուրս գալ Սարդարապատի շրջանում հակահարձակման անցած հայկական զորամասերի թիկունքը՝ նրանց կտրելով Երեւանից: Թուրքական այդ ծրագիրը խափանելու նպատակով՝ հայոց զորքերի հրամանատարությունը որոշում է Սարդարապատի ճակատից Դրոյի (Դրաստամատ Կանայան) գլխավորությամբ շտապ ուժեր (6000 զինվոր) տեղափոխել Բաշ Ապարան:

Մայիսի 24-ին Դրոյի զորաջոկատը մտնում է Ալի Քուչակ (այժմ՝ Քուչակ)՝ դեպի Բաշ Ապարան արշավող թուրքերին դիմակայելու համար: Մայիսի 29-ին Բաշ Ապարանում ջախջախվեց հակառակորդի 2 զուևդ, եւ ոչնչացվեց ծանր հրետանին: Թշնամին, մարտադաշտում թողնելով մոտ 200 սպանված, 2 զնդացիր, 100-ից ավելի հրացան եւ զինամթերք, հետ է մղվում Բաշ Ապարանից արեւմուտք:

Հայկական կանոնավոր զորամասերին մեծ աջակցություն են ցույց տվել ինչպես հայ, այնպես էլ ձախանգիր աղայի գլխավորությամբ եզդի աշխարհագորայինները (1500 հեծյալ): Մարտերի ընթացքում թուրքական

հրոսակները գլխովին ջախջախվել են եւ հետ շարտվել Բաշ Ապարանից արեւմուտք:

Թուրքական երկրորդ զորախումբը, որը հրաման ուներ հարձակվելու Ջաջուռ—Համանլու (Սպիտակ) — Ղարաքիլիսա (Վանաձոր) — Դիլիջան—Ղազախ—Ելիզավետպոլ (Գանձակ, Գյանջա) ուղղությամբ, մայիսի 20-ին գրավեց Ջաջուռը, Աղբուլաղը (այժմ՝ Լուսաղբյուր), Ղաթաղչին (այժմ՝ Հարթաղյուղ), մայիսի 21-ին՝ Վորոնցովկան (Տաշիր): Մայիսի 21—22-ին Ջալալօղլիի (այժմ՝ Ստեփանավան) մոտ մղված երկօրյա մարտերից հետո Անդրանիկի ջոկատը կենտրոնացավ Դսեղ գյուղում, ապա շարժվեց դեպի Դիլիջան: Գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանով 1-ին դիվիզիան (հրամանատար՝ գնդապետ Ալեքսանդր Բեյ-Մամիկոնյան) եւ երկու լեռնային մարտկոցներ քաշվեցին դեպի Շահալի գյուղ (այժմ՝ Վահագնի), մնացածները կենտրոնացան Դիլիջանի մոտ: Մայիսի 24-ին թուրքերը գրավեցին Համանլուն: Ղարաքիլիսայի մոտ կենտրոնացած հայկական զորքը (հրամանատար Թ. Նազարբեկյան) ուներ մոտ 6000 զինվոր, 70 հրամոթ եւ մոտ 20 զնդացիր, թուրքական զորքը (հրամանատար՝ Ջավադ բեյ)՝ մոտ 10 000 ասկյար, 70 հրամոթ եւ 40 զնդացիր: Մարտերին հերոսաբար մասնակցել են նաեւ Ղարաքիլիսայի շրջակա գյուղերի բնակիչները:

Հայկական ուժերը թուրքերին հիմնական հարվածներ հասցրին Դշլաղ (այժմ՝ Դարպաս) գյուղի մոտ, Բզովլայի (այժմ՝ Բազում գյուղ) մատույցներում եւ Մայմեխ լեռան լանջերին ու թուրքական զերակշիռ ուժերին հարկադրեցին նահանջել դեպի Համանլու: Մարտերի ընթացքում հայերը տվեցին



մեծ կորուստներ (շուրջ 2500 սպանված, վիրավոր եւ զերի): Մեծ կորուստներ տվեցին նաեւ թուրքերը, սակայն, համալրում ստանալով, անցան հակահարձակման, եւ հայկական ուժերը հարկադրված նահանջեցին դեպի Դիլիջան: Ղարաքիլիսայում եւ շրջակա գյուղերում թուրք ջարդարարները կոտորեցին հայ բնակչությանը (շուրջ 5000 մարդ), ավերեցին բնակավայրերը: Ղարաքիլիսայի ճակատամարտից հետո թուրքական զորքերն արշավեցին Ղազախ, Գանձակ եւ Բաքու: Ցավոք, հայկական ուժերը, չունենալով բավարար քանակություն զինվորական ուժեր, աշխարհագրայիններ, զենք ու զինամթերք, չկարողացան կանգնեցնել թուրքական զորախմբի առաջխաղացումը դեպի Ղազախ: Սակայն

Ղարաքիլիսայի ճակատամարտը չի կարելի թուրքերի հաղթանակ համարել, քանզի այդ «հաղթանակած» զորախումբը, Բաշ Ապարանում ու Սարդարապատում ջախջախված ազգակիցներին օգնելու փոխարեն, շարժվեց դեպի Ղազախ, Գանձակ ու Բաքու: Այսինքն՝ այլուռոյան հաղթանակ տարած այս զորախումբը նախընտրեց շուտափույթ Հայաստանը լքելու ճանապարհը: Ղարաքիլիսայի ճակատամարտում հայերն ապացուցեցին, որ կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները:

Շարունակելի


Արման ՄԱՆՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Դոկտոր Գեորգ Աբգարյանը եւ նրա հայրենականներ գերդաստանը

← էջ 6

Հայրենական պատերազմ վեց զավակ ուղարկած ծնողները փոխանակ պատվի արժանանալու՝ հատկապես զոհված զավակների համար, մինչեւ ցմրոր ճաշակեցին դառն ճակատագիրը: «Մայրս վեց անգամ զնաց կայարան եւ վեց որդի ուղարկեց պատերազմ: Դրանից հետո նա եւ մայր էր, եւ տան տղամարդը» (Գ. Աբգարյան, Մայրս վեց անգամ զնաց կայարան, «Գրական թերթ», 1961, նոյեմբերի 10: Նաեւ՝ Գ. Աբգարյան, «Известия», Москва, 1962, 28 февраля): Իսկ հայրը՝ Վարագը (Վահան), Գեորգի ձերբակալման օրերին վախճանվեց:

Ոչ գերմանական գերությունից փախուստը, ոչ երեք հարազատ եղբայրների կոտլուտը, ոչ հոր մահը 1947 թվին չփրկեցին Գեորգին աքսորից: Երեւանում ձերբակալված Գեորգին հարցաքննելու ժամանակ քննիչը, իբր անփութորեն, իր գրասեղանին էր դրել Արթիկի շրջանային լրագիրը, որի բացված էջի վրա գրված էր Գեորգի հոր մահվան հայտարարությունը: Եվ սա արված էր նրան հոգեպես կոտրելու եւ ցուցմունք կորզելու դիտավորությամբ: Ի վերուստ սահմանված հրահանգով, առանց դատավարության նա դատապարտվեց 10 տարվա ազատազրկման, որից 8 տարին անցկացրեց Վոլգա գետի ափին գտնվող Գորկի քաղաքի մոտ Սուխոբեզվոդոյե (չոր-ջրագուրկ) կոչված կալանավայրում: Շատերը չէին դիմանում աքսորի տաժանակիր պայմաններին: Գեորգը դիմացավ շնորհիվ իր համալսարանական ընկերուհի՝ Ալինա Սեդրոյանի հոգատարության, որի անձնավորությունը եւ դժվարին պայմաններ



րում ներքին գործերի խիստ հսկողությամբ թույլատրված նրա այցելությունները հոգեկան կորով էին հաղորդում սիրելի անձնավորությանը: Հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ, այդ թվում նաեւ ընտանեկան՝ Ալինան, որը սովորել էր Մոսկվայի ասպիրանտուրայում եւ արդեն ֆրանսերեն լեզվի դասախոս էր Երեւանի պետական համալսարանում, այդ 8 տարիների ընթացքում 12 անգամ այցելեց Գեորգին՝ տաք շորեր եւ անհրաժեշտ պարեն հասցնելով նրան: Նույնիսկ ներքին գործերի աշխատողները զարմանում էին քնքուշ ծայնով եւ փխրուն կազմվածքով այդ աղջկա տոկոսության եւ արիության վրա: Տողերիս

գրողի հետ մտերմիկ գրուցելիս Գեորգը երբեմն հիշում էր այդ ծանր տարիները: Մի անգամ, երբ տարել էին ծառահատման թեբեռնաթափման, մնացել էր գերանի տակ, ու աջ կողմի երկու-երեք կողոսկրները կոտրվել էին, եւ անկեղծանալով ասաց, թե այդ օրերին Ալինան անակնկալ այցելության էր եկել, եւ ինքը ստիպված էր «ծիգ կերպարանքով (իր բառերն են), մի կերպ ցավերը զսպելով գնալ տեսակցության, որպեսզի նա չզգա իր հետ պատահածը»: Աղջկա արիությունն այդչափ ոգեշնչող էր իր համար:

Իր գիտական մակարդակով Գեորգ Աբգարյանն առանձնանում եւ հարգանք էր վայելում աքսորականների շրջանում, որոնք հարսնացուին ճանապարհելիս ուղեկցում էին Գեորգին կալանավայրի վտանգավոր տեղանքներում, որտեղ ուժեղ էր իրավագանցների ազդեցությունը: Հատկապես հաշվի առնելով նրա լատիներենի իմացությունը՝ կալանավայրի բժշկական անձնակազմը հաճախ խնդրում էր վերծանել բուժաշխատողներին հատուկ անընթեռնելի ձեռագրով գրված դեղատոմսերը եւ թարգմանել ռուսերեն: Կալանավայրում Աբգարյանը մտերմացավ էստոնացի գիտական, թարգմանիչ Բորիս Կաբուրի հետ, որը հետագայում հիշում է, որ «Սասունցի Դավիթ» հայկական էպոսն էստոներեն թարգմանելու «մտադրության եւ ոգեշնչման համար պարտական է Գ. Աբգարյանին» (Sassuuni Davith. Armeenian keelest tõlkinud Boris Kabur. Tallin, 1975, leht 178):

Շարունակելի

Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

Մուշեղ Գալշոյան

← էջ 5, 6

Գեղարվեստական տեսակետից ուշագրավ համաձուլվածք է Մ. Գալշոյանի խոսքը: Պատումի շնչով՝ վիպական, բայց նույնքան էլ՝ քնարական: Տեղ-տեղ վիպական պատմությունը ձեռք է տալիս եւ հոսում որպես արձակ բանաստեղծություն, ինչպես այս դեպքում. «Անձրեւ, մանրահատիկ անձրեւ, մաղմղիր դաշտերի վրա, մաղմղիր ձորերի վրա, մաղմղիր սարերին, անտառներին մաղմղիր, մանրահատիկ անձրեւ, դու մաղվիր որպես մանանա»: Քնարական նուրբ լիցքով հանդերձ՝ Մ. Գալշոյանը պատմող է եւ պատմում է այնպես, ինչպես Սասնա Տան դյուցազներգությունն ասացողները: Սասնա Տան վեպի նման նրա հերոսներն էլ պարզ են ու միամիտ, արդար ու ազնիվ, բռնկուն ու հերոսական, խենթաբայալ՝ արժանապատիվ կյանքի համար: Հայրենիքի սիրո բարձր միջուկն է նրանց կյանքի նպատակը, ապրելու միակ իմաստը, որ նրանք իրենց հոգում կրում են գիտակցական կյանքի սկզբից մինչեւ մահ:

Ահա դժվարին, բայց հերոսական կյանքի այս ընդգրկումով ընթերցողին է հասցեագրվում Մ. Գալշոյանի վաստակը: Ինքնայրույն ծնված ազնիվ ու արդար էջեր՝ կոչված ամրապնդելու հայրենիքի սրբազան սերը եւ ներքուստ ընդարձակելու ազգային կենսագոյության քարտեզը: Այս էր նրան վիճակված, եւ նա դրա տերն էր:

Դավիթ ԳԱՄԴԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սերգեյ Շերվինսկին հայ գրականության թարգմանիչ

← էջ 7

Շարունակելով իր ընթացքը Արեւմտյան Հայաստանի ողբերգական ճանապարհներով՝ Շերվինսկին կանգ առավ նաեւ Դանիել Վարուժանի ստեղծագործության վրա: Վարուժանի բանաստեղծական ժառանգությունից անթուղիայում ներկայացված է ընդամենը երեք ստեղծագործություն, որոնցից երկուսի՝ «Կարոտի նամակ» եւ «Առկայծ ծրագ» բանաստեղծությունների թարգմանությունները կատարել է Շերվինսկին: Անդրադառնալով «Կարոտի նամակ» բանաստեղծության թարգմանությանը: Պետք է նշել, որ թարգմանելիս Շերվինսկին օգտվում էր Վահան Տեղյանի կատարած տողացի թարգմանությունից, որը հնարավորինս հասկանալի էր փոխադրում բանաստեղծության էությունը: Այնուամենայնիվ, թարգմանչի առջեւ մեծ խնդիր էր ծառացել՝ կարողանալ ոչ միայն վերստեղծել բանաստեղծության գաղափարը, այլեւ պահպանել հեղինակի ոճը: Ինչպես նշում է Աննա Հակոբյանը. «Թարգմանության խնդիրը ոչ միայն բնագրի լեզվով մտքերի բովանդակության ճշգրիտ շարադրումն է, այլեւ թարգմանության լեզվի միջոցներով հաղորդման ձեւի եւ ոճի առանձնահատկությունների վերստեղծումը» (Ա. Հակոբյան, Թարգմանության տեսության հիմունքներ, Երեւան, 2006, էջ 6): Շերվինսկուն հաջողվել է հաղթահարել թարգմանական այդ խնդիրները: Սակայն վերն ասվածը հաստատելու համար նախեւառաջ ներկայացնենք բնագրից մի հատված.

Կգրե մայրս. «Ով իմ որդյակս պանդուխտ, Դեռ մինչեւ երբ պիտ անձանոթ լուսնի տակ Օրերդ անցնին, դեռ մինչեւ էրբ հեզ գլխուդ Ես չըսեղմեն լանջքիս տաք:

Հերիք օտար սանդուղքներե ելլեն վեր Ոտքերդ՝ որ օր մ'ափերուս մեջ տաքցուցի, Հերիք ալ սիրտդ՝ ուր իմ ծիծերս եմ պարպեր Դատարկ սրտես դուրս հյուծի:

Ջահրակին տակ թեւերս աշխատ հոգներ են Կ'հյուսեն պատանքս ալ՝ ծամերովս ըսպիտակ.

Ախ, քեզ տեսնեն անգամ մ'աչքերս ու փակեն թող հոգիս ալ՝ իրենց տակ:

(Դ. Վարուժան, Բանաստեղծություններ, Երեւան, 1955, էջ 108)

Ահա հենց այս բանաստեղծության թարգմանությունն էլ հանձն առավ Սերգեյ Շերվինսկին: Ստորեւ ներկայացնում ենք սույն հատվածի թարգմանությունը.

Мать пишет: сынок, о скиталец ты мой, Доколь свои дни под чужою луной будешь влачить, не придешь отдохнуть Ко мне на горячую грудь?

Согретым когда-то в ладонях моих, Довольно ногам твоим — лестниц чужих. Ты сердцем иссох, вспоминая с тоской Пустынное сердце, родной.

Рука истомилась, а пряжа длинна... Из белых волос — мне на гроб пелена. Лишь видеть тебя — да под тяжестью век Закрывать бы и душу навек.

(«Поэзия Армении...», նշվ. աշխ., էջ 481)

Շերվինսկին, անդրադառնալով Վարուժանի այս ստեղծագործությանը, գրում է. «Այս բանաստեղծությամբ առաջին անգամ իմ առաջ կանգնեց հայ մոր պատկերը, որ տառապում է իր պանդուխտ որդու կարոտից» (էջ 190): Թվում է՝ օտարերկրացին ի վիճակի չէր հասկանալու հայի կարոտը, սակայն պետք է նշենք, որ Շերվինսկին իր թարգմանության մեջ հարազատորեն վերստեղծել է բնագրի բոլոր յուրահատկությունները: Թարգմանությունն ընթերցելիս եւս մեր առջեւ է կանգնում հայ մոր կերպարը, եւ Շերվինսկին վարպետորեն է կերտել նրա ցաված հոգին: Մոր խոսքն այնքան ազդեցիկ է, որ թեւե բանաստեղծության մեջ տղան չի խոսում, մենք ենթագիտակցորեն զգում ենք նաեւ նրա ապրումները: Շերվինսկին միայն մեկ երկտողով կարողանում է բանաստեղծական տողերում վերակենդանացնել նաեւ հայոց որդու կերպարը: «Ты сердцем иссох, вспоминая с тоской пустынное сердце родной»,—



ղացել է ընթերցել նաեւ նրա միակ ցանկությունը, այն է՝ գեթ մեկ անգամ տեսնել իր որդուն. «Лишь видеть тебя — да под тяжестью век закрыть бы и душу навек»: Ճիշտ է՝ վարուժանյան բնագրում չի շեշտվում «ընդմիջտ» ասվածը, սակայն Շերվինսկին իր թարգմանության մեջ գրում է «навек», եւ սա վկայում է այն մասին, որ թարգմանիչը զուտ բառացի թարգմանություն չի կատարել, այլ ձգտել է առավելապես փոխադրել բնագրի իմաստն ու հուզականությունը:

Շարունակելի

Սամվել ԵՂԻԱՉԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Ասողիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 1.06.2021 թ.

Տպաքանակը՝ 1225